Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլ ի հարցաշարերի պատասխաններ
11-րդ դասարան

1. Նար- Դոսը հայ հոգեբանական գրականության հիմնադիրներից է, «մեր խոսքի լուրջ վարպետներից և մեր գրականության հավերժ փառքերից մեկը», ում ստեղծագործությունը տանում է մեզ մարդկային հոգու ամենագաղտնի ու թաքուն խորքերը: Նրա պատմվածքներն ու վեպերը այսօր էլ ընթերցվում են մեծ հափշտակությամբ: Այդպիսինն է «Սպանված աղավնին»վիպակը, որը ժամանակի ամենակարդացված ու ամենահակասական արձագանքներ ստացած գործերից է: Վիպակը մի խաբված աղջկա ողբերգական կյանքի պատմություն է՝ հիմնված իրական, հավաստի փաստերի վրա, որը պատմում է հեղինակը՝ ներկայանալով Միքայել Մարգարյան անունով: Ո՞վ է սպանված աղավնին, ինչո՞ւ է վիպակը կրում այդպիսի խորհրդանշական վերնագիր: Հերուուհուն մենք հանդիպում ենք անտառում՝ ընթերցելիս: Առաջին հանդիպումը համակրանք է առաջացնում. գեղեցիկ արտաքինով , խոհական հայացքով, ներամփոփ աղջիկը կյանքը ճանաչել է միայն գրքերով: Նա չունի սրտակից մարդ, չի երևում հասարակական որևէ ոլորտում: Եվ հանկարծ հանդիպում է մեկին, ով նման է իր երազանքների ասպետին, իր կարդացած գրքերի հերոսներին: Մնացյալը մենք իմանում ենք հետո, երբ հեղինակը պատմում է իր առաջին հանդիպման մասին: Այդ գեղեցիկ աղջիկը ավելի շատ հասուն կնոջ տպավորություն է թողնում, կենտրոնացած է ու չար: Ունի խոժոռ հայացք, իսկ ձեռքսեղմումը այնքան պինդ է, որ տղամարդու է հիշեցնում, տարօրինակ է պահվածքը: Իսկ ո՞վ է Սառան՝ վիպակի հերոսուհին, Նա որդեգիր է, կորցրել է ծնողներին և մեծացել օտար ընտանիքում՝ զուրկ քնքշանքից, սիրուց, անկեղծ ու սրտացավ վերաբերմունքից: Նրա մանկությունը տխուր է անցել, անհոգ խաղերը նրա համար չեն, և նա ամփոփվել է ինքն իր մեջ, ապրել գրքերի անիրական աշխարհում: Առաջին հանդիպումը ասպետորեն գեղեցիկ ու բարեկիրթ երիտասարդի հետ երջանկացնում է նրան: Սիրում է անկեղծ ու ինքնամոռաց, և նրա հետ կատարվում է այն, ինչ բնական է ուգեղեցիկ սիրող սրտերի համար: Բայց սիրած տղամարդը հեռանում է՝ խոստանալով վերադառնալ: Բայց տարածությունն ու ժամանակը հեռացնում են նրանց; Մայրանալու պատրաստ աղջիկը իրեն անարգված ու լքված է զգում, նա մենակ է ընդդեմ ճակատագրի: Խաբվածության ցավն ու վրեժխնդրությունը, սպանված հավատն ու գողացված անմեղությունը բզկտում են նրա առանց այն էլ խոցված հոգին, և նա դառնում է ակամա որդեսպան: Այնքան անդարմանելի է նրա վիշտն ու խաբվածությունը, որ նա ուզում է այրել այն ամենը, որկհիշեցնի իրեն իր ապրածը: Սառան կրկնում է արարքը, ով Յասոնից վրեժխնդիր լինելու համար սպանում է նրանից ունեցած որդիներին: Իհարկե, դաժան ու աններելի է Սառայի վարմունքը, բայց ծանր անկության ստվերը ամեն վայրկյան նրա հետ է, նա մենակ է, խնամակալները նույնպես նպաստում են, նպաստում է հասարակությունը, ով պատրաստ է հոշոտելու անզորին ու անուժին: Մնացյալը՝ աշակերտը:

2. «Մեր թռիչքը Հովհաննես Թումանյանի արվեստի գոհարակերտ բարթունքից այն կողմ չի անցել». մեծ Վարպետի գնահատականն է «մեր քերթության անհաս Արարատին»: Ամեն անգամ, երբ մենք մոտենում ենք «մեծերից ամենամեծին», համոզվում ենք, որ մանկությունից մինչ մահ մենք նրա հետ ենք. նրա հետ ենք, երբ հայ գեղջուկը ապավինում է գութանին, երբ փոքրիկ սովալլուկ մանուկները հաց են աղերսում մեռնող մորից, երբ աստղազարդ երկնքի ներքո լսում ենք Նեսոյի հեքիաթները, երբ Գիթորը, ցրտից դողալով մուշտարի է կանչում: Եվ այսպես, ամեն պահ նա մեր մեջ է, մեր կողքին: Ամենայն հայոց բանաստեղծը անմրցելի է որ միայն չափածոյում, այլև արձակում: Նրա գրիչը բեղմնավոր է բոլոր ժանրերում, բոլոր ժանրերում, իր իսկ խոստովանությամբ, նա դրամատուրգ է: Դրամատուրգ է նաև «Գիքորը» հրաշքում, Այս տխուր պատմությունը միայն 12- ամյա գեղջուկ պատանու մասին չէ, այն մինչ այսօր էլ չքավորության ճիրաններում տառապող միլիոնավոր երեխաների մասին է: «Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել». պատճառը անզորությունից, կարիքի ճիրաններից ազատվելու Համբոյի ծանր որոշումն է՝12 ամյա որդուն քաղաքտանել , մի գործի տալ, որ «մարդ դառնա, նստել–վեր կենալ սովորի, գրել-կարդալ իմանա»: Մայրը, ասես կանխազգալով վերահաս աղետը, չէր ուզում.«Չեմ ուզում, իմ քորփա երեխին էն անիրավ աշխարը մի գցիլ, չեմ ուզում»: Ահա այս անիրավ անիրավ աշխարհն էլ կլանում է բնության ազատ զավակին, աշխարհի անիրավություններին ու իրենց թշվառ վիճակին անտեղյակ գիքորներին:ազատ դաշտերում խաղացող երեխան ամենակուլ քաղաքում է, բազազ Արտեմի տանը, միամի՛տ, մաքո՛ւր : Համբոն նրան քաղաք է բերել սովի ու աղքատության ճիրաններից ազատվելու հավատով: Հայ գյուղացին անելանելի վիճակում է, նոր զարգացող կապիտալիստական կարգերը խարխլել են առանց այն էլ ծանր կացության մեջ գտնվող գյուղի գոյության իրավունքը, Համբոյի նման շատերն են փորձում ելք գտնել: Իսկ ելքը անելանելի վիճակն է, որի հրաշալի պատկերը տեսնում ենք Համբոյի նամակում.«Մեր սիրելի որդի Գիքոր ջան, ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա, և խարջը սաստիկ ուզում են, և փող չենք ճարում, և Նանն ու Զանին տկլոր են: Եվ իմացած ըլես, որ Ծաղիկը սատկեց, և Ն անն ու Զանին տկլոր են: Գիքոր ջան մի քանի մանեթ փող ղարգի և մի գիր ղարգի քու որպեսութենիցը»: Ահա գյուղացու վիճակը, և թալանված մանկությամբ Գիքորը անզոր է իր մանկական հոգում տեղավորել այս ծանր կացությունը. նա անափ կարոտով է հիշում գյուղը, իր ընկերներին, իրենց անհոգ խաղերը և խեղդվում է այս օտար ու անհոգի միջավայրում: Այս տխուր ու երազկոտ փոքրիկի բախտին են արժանանում իր նման բոլորըէ Զանին, Մակիչը, Գալոն. բոլորի բածտի ուռկանը դատարկ է: Մենք սիրում ենք Գիքորին անբացատրելի սիրով, նրա կերպարը դաջվում է մեր հուգում՝ առաջացնելով կարեկցանք ու կսկիծ,և մենք էլ նրա հետ« դողացել ենք ցրտից՝ծեծված անձրևից, ցրտահար ու մերկ»: Եվ բանաստեղծուհու հետ մենք էլ ենք ասում՝

Փոքրի՛կ Գիքոր, առաջին իմ վիշտն ես դարձել… Անանց է զայրույթը անհոգի մարդկանց նկատմամբ, անվերծանելի է այս փոքրիկ տղայի զարմանքը: Հիմա նրա անունը անմեղության ու մաքրության խորհրդանիշ է…Մնացյալը՝ աշակերտը:

3. Հայ գրականության «հիվանդ, հանճարեղ պատանին» ծնվել էԱկնա գավառի Բինկյան գյուղում, նրա մանկությունը խաղացել է Արածանիի ափերին , Սուրբ Աստվածածնի վանքի բանկում, կուսական գեղեցկությունների ծոցում, որոնք անջնջելի հետք են թողել վաղամեռիկ բանաստեղծ- բնապաշտի ստեղծագործություններում: նա անմրցելի է բնության սիրո, ցավի և երազների լիառատ թեմաների մեջ: Մեծարենցի բնապաշտությունը ընթերցողին պարուրում է քնքուշ, գեղեցիկ նվագներով: Նրա բանաստեղծություններից ճառագում է անհուն սեր գիշերի, լուսնի, արևի, թուփ ու ծաղկի, ծառերի և բնության մաս կազմող ամեն ինչի նկատմամբ՝ Աղջամուղջին մէջ գիշերը կ՚երազէ պայծառ այգուն վառ շրթները կեռասէ… Բնության նկարագրություն, բնության շնչավորում, բնության մասնակցություն մարդկային կյանքին ու ճակատագրին և մարդն՝ անքակտելի մասնիկ այդ բնության. ահա լույսերու նավորդի աշխարհը, որտեղ նա սպասման հիվանդն է՝ հայացքն ուղղելով դեպի բնությունը, դեպի մանկական հուշերի անապական աշխարհը, դեպի անրջալի գիշերները:«Գիշերին մեջ չէ՞ ապաքեն, որ երազներն ավելի վառ և արագ վերթևումներ կունենան»,- ճարտասանական հարց է ուղղում բանաստեղծը և անմիջապես պատասխանում՝ Համբույրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց,

թող որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

Գիշերը բանաստեղծի համար ստեղծում է տեսիլների դյութական մի աշխարհ , և նա գինով է՝

Գիշերն անու՜յշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու բալասանով
Լուսեղեն ճամփեն ես կանցնիմ գինով…

Որովհետև այն իր եթերային թովչանքով մի նոր աշխարհի դռներ է բացում, զարթնեցնում է իր ապրած գեղեցիկ մանկության հովվերգական գեղեցկությունները: Մեծարենցի բնությունը լի է կյանքով և իմաստությամբ. նրա հովը «աղջնակ մըն է՝ գինով մուրտի բուրումեն», նա «ծաղիկներու խաղընկերն է», որ «պզտիկ երգեր կը կարդա»: «Ինչ երջանկություն, տերևի մը խարշափին մեջ տեսնել տիեզերական զորության գաղտնիքը, ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպի անհունը»: Եվ նա իչ ամբողջ էությամբ ձուլվում է բնությանը, նրա սիրտը բաբախում է բնության սիրով, լցվում է անհուն խանդաղատանքով դեպի մարդը, դեպի անծանոթն ու մերձավորը, ուզում է վերադարձնել «բաղձանքով ակաղձուն» նավակները, որպեսզի իր իղձերը բաժանի բոլորին՝ բուժելով նրանց ցաված հոգիները՝ աղերսելով ամենազոր արևին՝

Վերջին անգա՜մ մըն ալ, դեռ իրիկո՜ւն չ՚եղած,
Փարե հոգվույս խանդաբորբ ու կաթոգին,
Հիվա՜նդ եմ, բարի՜ արև, շողա՜, շողա՜…

Ու շողում է բարի արևը՝ բաշխելով անանձնական սիրո անբացատելի հմայքը այսօր և միշտ: :

Վերլուծությունը՝ աշակերտի ընտրությամբ:

4. Այդ հարցին պիտի պատասխանի աշակերտը:

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլ ի
հարցաշարերի գնահատման չափանիշներ
11-րդ դասարան

1-ին հարցի ենթահարցեր՝ 1 – 1 մ., 2 – 2 մ., 3 – 2 մ.
2-րդ հարցի ենթահարցեր՝ 1 – 1 մ., 2 – 4 մ.
3-րդ հարց՝ ենթահարցեր՝ 1 – 1 մ., 2 - 4 մ.
4-րդ հարցի ենթահարցեր՝ 1 – 3 մ., 2 – 2 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան